Յոյժ սիրելի
Ծայրագոյն վարդապետներ, վարդապետներ, քահանաներ, սարկաւագներ, մայրապետեր եւ հաւատացեալ քոյրեր ու եղբայրներ, մանուկներ ու տարեցներ, պատանիներ եւ երիտասարդներ,

Մարդկային պատմութեան ընթացքին չկրկնուած եւ ցաւոք, տակաւին թերի հասկացուած ու ապրուող, բայց մեր փրկութեան հաւաստիքի առջեւ ենք այսօր: Ի սէր եւ ի գին մեր փրկութեան եւս մէկ անգամ արժանի ենք նայել ու տեսնել այն քարանձաւը, ուր թաղուած էր մեր Փրկիչը՝ Քրիստոս:

Այո, սիրելիներ, Աստուածորդին՝ համակ սէրը, չարչարուեց ու գանակոծուեց եւ մեռաւ խաչի վրայ: Եւ իբրեւ երաշխիք ու գրաւական մարդուս փրկութեան՝ Յարութիւն առաւ: Ահաւասիկ այսօր էլ գերեզմանի մէջ ճերմակ պատանքի կողքին նստած հրեշտակը կրկնում է մեզ. «Այստեղ չէ, Յարութիւն առաւ»:

Բայց, աւաղ, այսօր էլ մենք հետեւում ենք ամբողջ աշխարհում անհատների եւ հաստատութիւնների՝ գիտնականներ, հնէաբաններ թէ պատմաբաններ, որ փորձում են պեղել մարդկութեան պատմութիւնը, փորփրում Աստուածակոխ Երկիրը եւ փորձում գտնել նորանոր փաստեր Քրիստոսի գոյութեան եւ հերքումը՝ Աստուածորդու Յայտնութեան ու Յարութեան: Տօնական այս օրերին կրկին հնչեցւում են այս յիմարութիւնները... նորութիւն չէ, սիրելիներս. «Աստուած գոյութիւն չունի,- անմիտն ասաց իր սրտում»,- յիշեցնում է մեզ Սուրբ Գիրքը: Այո՛, անմտութիւնը դեռ կայ եւ այն ցաւալի կերպով հնչեցւում է զանազան բարձր ու ցածր հարթակներից:

Քննարկւում է Քրիստոս անձը ամէն կերպ՝ իբրեւ պատմական կերպար, ուժեղ անհատ, կրօնի հիմնադիր, բարոյականութեան ուսուցիչ, բայց ոչ երբէք Քրիստոս՝ Փրկիչ Աստուածորդի, որ սիրեց իւրայիններին, իսպառ սիրեց եւ իր կեանքը տուեց նրանց համար ու ամբողջապէս կատարելով Հօր կամքը՝ փառաւորեց Հօրը, եւ Հայրն էլ Որդուն փառաւորեց եւ Իւր Յարութիւնից յետոյ ամէն իշխանութիւն եւ ամէն դատաստան տուեց Իր Որդուն:

Չենք հասկանում տակաւին, որ Յիսուս պարզապէս կրօնի հիմնադիր չէ, ոչ էլ պարզապէս բարոյական կերպար եւ ուսուցիչ: Կործանուող մարդկութիւնը կարօտ չէ ուսուցչի: Աշխարհը շատ ու շատ ուսուցիչներ ու վարդապետներ տուեց, որ առաջնորդեցին եւ դեռ առաջնորդում են դէպի անդունդները կործանման ու նորանոր պատերազմների: Մարդս այսօրուայ թշուառ է իր բոլոր տագնապների ու երազուած կեղծ լաւագոյն կեանքի յուսահատ փնտրտուքների մէջ: Եւ չենք հասկանում նորից ու նորից, որ այս դժբախտութիւնը ու անհաւատութիւնը ծնունդ է առնում մէկ իրողութիւնից, որ մեղք է կոչւում: Մարդս կարօտ է ազատուելու մեղքի գերութիւնից: Ուրեմն կարիք ունի մէկի, որի անունը լինի Յիսուս-Փրկիչ: Խեղդուող մարդը ո՛չ խրատի, ո՛չ ճառի կամ պերճախօս ճառասանի կարիք ունի: Փրկարար ձեռքն է, որ փնտրում է մարդը՝ տագնապած մեղքի ճիրաններից ազատուելու համար: Քրիստոնէութիւնն էլ բարոյական դրոյթներ չէ եւ կամ կրօնական տեսութիւններ, որ պէտք է դաւանել, այլ փրկարար Աւետարանն է, որ պէտք է ընդունենք, եւ այդ Աւետիսն է. «Ձեզ համար այսօր մի Փրկիչ ծնուեց»:

Հաստատուն հաւատով մօտենանք մեր Փրկչին, որ ասում է մեզ. «Ես եմ յարութիւնը եւ կեանքը», ու եւս մէկ անգամ ցնծագին հաղորդենք մէկ մէկու. «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»:

Արհ. Ռափայէլ Արքեպս. Մինասեան
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի
եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց